ԱՆՅՈՒՐԳԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ԿԱԿԻՆԵԱՆ ՄԱՐԿՈՍ ԱՂԱՆ

Արտասահմանից երբեմն հիւրեր են գալիս: Շուարած թռչունի նման՝ թեւերը թափ են տալիս եւ ընկնում Արովեան փողոց:

Լրաբերներ, պատուիրակներ, դաղթականներ, Խորհրդային իշխանութեան բարեկամներ:

Մեծ, պզտիկ, հարուստ, աղքատ:

Դուրս են պրծնում յանկարծակի, անսպասելի կերպով, միշտ էլ ամենքին զարմանք պատճառելով: Անցորդները նայում են, քընում, զննում, մէկ մէկի հարց տալիս: Եկուորն էլ կանգնում է փողոցում, աչքերը յառում Արարատի վրայ, թուքը կլլում, ժըպտում, քիթը վեր բարձրացնում օդը հոտոտում, կարծես պատրաստւում է ջուրը նետուելու: Մի քանի օր այդպէս, ճանապարհը կորցրած տաւարի նման տրորում է գլուխը, չորս կողմը վախկոտ նայուածքներ գցում ու պատերին քսում, զգուշօրէն:

Սակայն, եթէ հարուստ է, չորրորդ օրը աքլոր դառնում եւ առաւօտեան երգ երգում...

* * *

Քաղաքացի Կակինեան Մարկոս աղան հարուստ է: Այսինքն՝ տարակուսողներ էլ կան — ի՞նչ հարուստ, եկել է դիակ չորթելու: Բայց քաղաքացի Մարկոս աղան հարուստ է: Պէ՛տք է, որ հարուստ լինի կամ ձեւանայ, որովհետեւ բեմադրութիւնը այդպէս է պահանջում:

Լաւ կը լինէր, օրինակի համար, որ Մարկոս աղան, ամբողջ ժողովրդի ներկայութեամբ, ծնկաչոք սողար մինչեւ իշխանութեան օթեակը եւ իր ձեռքի մէջ սեղմած ոսկիով լեցուն տոպրակները ներկայացնէր Գործկոմի նախագահին եւ Հողգործկոմին:

Զինուորական երաժշտախումբը Ինտերնասիոնալ կը նուագէր եւ ամէն ոք գլխարկը վար կ՚առնէր:

Բայց, դժբախտաբար, նախ ոսկիները չկան, եւ բեմավարը ամէն ինչ ուրիշ կերպ ծրագրած է:

Առ այժմ այդպէս է:

Բանուորա-գիւղացիական երկրում, «փող ունի»ն մոդական բառ է: Աչքերի մէջ արեւ է փայլեցնում եւ ոսկէ բորոդանի նման հնչում է: Հարուստի առջեւ բոլոր դռները բաց են եւ գլխարկները օդի մէջ բարձրանում են վախցած թռչունների նման:

Ուստի, Մարկոս աղան հարուստ է: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ հարուստ լինի: «Տեսէ՛ք, դաղութահայութիւնը ինչ վստահութիւն ունի մեզ վրայ, հարուստներն իսկ գալիս են»...

* * *

Մարկոս աղայի հետ աշխատում են խօսիլ փողոցում, որպէսզի ամենքը տեսնեն: Խօսում են քաղաքավարի ժպիտով, մտածկոտ, լուրջ, գործնական մարդու արտայայտութիւն ձեւացընելով դէմքի վրայ: Փաստեր, փաստեր: Թիւը թիւի վրայ է մագլցում, մղոնը մղոնին կապւում: Դրեակն:

Մարկոս աղան, գլուխը վար գցած, ուշադրութեամբ լսում է, փոքրիկ նօտատետրի մէջ ինչ որ բան նշանակում եւ՝ նոյնպէս բարձր ձայնով, որպէսզի անցորդները լսեն՝ պահանջում է աւելի մանրամասն տեղեկութիւններ եւ անպատճառ գրաւոր: «Եթէ ծախսեր կան, բան մը չէ, կը վճարենք»,— մրմռում է քթի տակ եւ անցնում ուրիշ հարցերի:

* * *

Դիմացի ճաշարանում ընկեր կոմիսարը սիրելի հիւրի բաժակը լեցնում է եւ շրթունքներին մեղր քսում:

Հայաստանի մեծահարուստ հանքերը դունչը բացել սպասում են Մարկոս աղային: Հարիւրին այսքան ոսկի. քիմիական անհրաժեշտ բաղադրութիւններ, նոր գիւտեր: Խիտ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան